Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ ՀՀ Բանակի կազմավորման 33-ամյակի առթիվ

28.01.2025

<<Սիրելի՛ Գեղարքունիքցիներ, ՀՀ բանակի հրամանատարներ և սպաներ, զինծառայողներ և կամավորականներ, ռազմական գործի ներկայացուցիչներ,
Շնորհավորում եմ բոլորիս մեր պատմության ամենակարևոր տոներից մեկի՝ բանակի կազմավորման 33-ամյակի կապակցությամբ։
ՀՀ բանակը կայացման մեծ ճանապարհ է անցել և այսօր հպարտությամբ կարող ենք արձանագրել, որ այն մեր անկախ պետականության պաշտպանության և անվտանգության թիվ մեկ երաշխավորն է, մեր նորագույն պատմության ամենափառահեղ ձեռքբերումներից մեկը, որի յուրաքանչյուր զինվոր պատվով է կատարում իր հայրենանվեր պարտքը։
Մենք բոլորս ոչ միայն ըստ արժանվույն պետք է գնահատենք հայ զինվորի կարևորագույն դերն ու նշանակությունը, այլև, յուրաքանչյուրս մեր գործունեության ասպարեզում, ըստ ամենայնի սատարենք և ամուր, շոշափելի ու հուսալի թիկունք լինենք նրա համար։
Խոնարհումս հանուն հայրենիքի ընկած յուրաքանչյուր զինվորի պայծառ հիշատակին և նրանց ծնողներին՝ դաստիարակությամբ ազգային արժեքները բարձր պահելու համար։
Եվս մեկ անգամ շնորհավորելով ՀՀ բանակի կազմավորման առթիվ, բոլորիս մաղթում եմ տևական խաղաղություն, կայունություն ու հզորացում, ՀՀ բանակին բարձր մարտունակություն՝ ի շահ մեր ժողովրդի և պետության>>։